| | |
|---|---|
| Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը) | **ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ (7.20ԳԴՁ2018)** |
| ECTS կրեդիտ | 2 կրեդիտ |
| Դասընթացի պատասխանատու դասախոս | Հովհաննիսյան Վ., տ.գ.թ., դոցենտ |
| Ուսումնառության վերջնարդյունքներ | Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>*(գիտելիքներ և հմտություններ)*<br>• բացատրել «կադաստրային թաղամաս» հասկացությունը ու բովանդակությունը,<br>• ցույց տալ բնակչության խտության արդյունավետ բաշխման տարբերակներ,<br>• ներկայացնել հողերի, շենքերի, շինությունների հաշվառման ձևերը,<br>• ներկայացնել տեղեկատվության ստացման և վերլուծության ձևերը,<br><br>*(կարողություններ)*<br>• կազմել կադաստրային թաղամասի հեռանկարային զարգացման պլան,<br>• մշակել տարածքների օպտիմալ օգտագործման պլան,<br>• կատարել անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում,<br>• կատարել աշխատանքներ հողերի, շենքերի, շինությունների պետական հաշվառման համար,<br>• վերլուծել և կիրառել կադաստրային տեղեկատվությունը: |
| Դասընթացի թեմատիկ ծրագիր | • Բնակեցված տարածքների պլանավորման և կառուցապատման գիտական, մեթոդական և օրենսդրական հիմքերը, կադաստրային թաղամասերի նախագծման հիմնական սկզբունքները: Նախագծման համար ելակետային նյութերը: Թաղամասերի հողերի, շենքերի և շինությունների հաշվեկշռի կազմում: Տեղանքի ընտրություն, բնական պայմանների հաշվառում, |

| | |
|---|---|
| | գեոդեզիական աշխատանքների իրականացում, նախագծի մշակում:<br>• Քաղաքաշինական միջավայր: Տարածք: Քաղաքային հողերի կազմակերպումը: Քաղաքային տարածքների հիմնական բնութագրերը: Քաղաքային տարածքի կառուցվածքը և ֆունկցիան: Քաղաքաշինության համար ինժեներական հետազոտությունները:<br>• Հողօգտագործման կարգը, տարածքի վարչատարածքային բաժանում, գոտևորում, գոտևորման քարտեզների մշակման հիմնական սկզբունքները, գեոդեզիական աշխատանքների իրականացում, սահմանների ճշգրտում: Կադաստրային քարտեզ: Անշարժ գույքի միավորի սահմանները և դրանց պահպանումը: |
| Դասընթացի գրականության ցանկ | • Հողային կադաստր, Եզեկյան Ա.Ս., Էֆենդյան Պ.Ս., Երևան, 2008թ., 278 էջ:<br>• Անշարժ գույքի էկոնոմիկա և կառավարում, Ստեփանյան Ս.Շ., Հովհաննիսյան Վ.Փ., Գրիգորյան Ա.Լ., Երևան 2007թ., 540 էջ:<br>• Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքը, 17 նոյեմբերի 2011թ., N318:<br>• Անշարժ գույքի կատարմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի ձևը և դրանում տվյալների լրացման առանձնահատկությունները հաստատելու մասին օրենք, 17 նոյեմբերի 2011թ., N320:<br>• ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 09.02.2012թ. «Գույքի նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցման դիմումները և փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը» հաստատելու մասին N 165-Ն որոշում:<br>• Клюшин Е.Б., Михелев Д.Ш., Барков Д.П. и др. // Практикум по прикладной геодезии. Геодезическое обеспечение строительства и эксплуатации инженерных сооружений. - М.: Недра, 1993г. - 289с. |